

ՊԻԿ հեռուստաալիքի լրագրողին վտարում են Ռուսաստանից

Հունիս 1, 2011

ՊԻԿ հեռուստաալիքի լրագրողին վտարում են Ռուսաստանից

 [natiya2pik_view.jpg](#) [1]

Մոսկվայի քաղաքային դատարանը երեկ որոշում է ընդունել հեռացնել երկրից Առաջին տեղեկատվական կովկասյան հեռուստաալիքի լրագրող Նատիա Փոլադաշվիլուն:

Ինչպես հայտնում է [Кавказский узел](#) [2] կայքը՝ մայիսի 30-ին Աբխազիայի նախագահ Սերգեյ Բադալայի հոլդարկավորման արարորդության ժամանակ ձերբակալվել են ՊԻԿ հեռուստաալիքի թղթակիցներ Ալեքսեյ Մատվենը և Նատիա Փոլադաշվիլին: Մատվենին տուգանել են 500 ռուբլի գումարով, իսկ Փոլադաշվիլու գործը ուղարկվել է դատարան:

Մայիսի 31-ին դատարանը որոշում է ընդունել Ադրբեջանի քաղաքացի Նատիա Փոլադաշվիլուն վտարել երկրից, հայտնում է «Грузия Online»-ը:

Ինչպես հայտնել են մայրաքաղաքի իրավապահ մարմինները՝ լրագրողները նկարահանում էին իրականացնում և հարցազրույցներ վերցնում առանց հավատարմագրման փաստաթղթերի:

Հատկանշական է, որ մարտի 2-ին տեղի ունեցած Մոսկվա-Թբիլիսի հեռուստակամրջի ժամանակ ուսական կողմը մեղադրել է ՊԻԿ հեռուստաալիքին այն բանում, որ վերջինս ապակայունացնում է իրավիճակը Կովկասում և նպաստում ՌԴ-ի քայքայմանը: Հեռուստաալիքի ղեկավարությունն էլ հայտարարել է օբյեկտիվ հաղորդումներ պատրաստելու իր նպատակների մասին:

Աղբյուր: <http://www.kavkaz-uzel.ru/> [3]

Թեմատիկ նյութեր

[Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտք որպես սեփական հայեցողություն. ոչ թե իրավունքի սահմանափակում»](#) [4]

[2012 թվականի ընթացքում ԼՀԱ-ի իրականացրած հետազոտությունները](#) [5]

[ԼՀԱ-ի ծրագիրը One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում](#) [6]

[Ditaket.am: Հաշմանդամ աղջկա երազանքն իրականություն դարձավ](#) [7]

[Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն](#) [8]

Source URL: <http://www.jnews.am/node/1247>

Links:

[1] http://www.jnews.am/files/natiya2pik_view_0.jpg

[2] <http://kavkaz-uzel.ru/>

[3] <http://www.kavkaz-uzel.ru/articles/186412>

[4] <http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan>

[5] <http://www.jnews.am/jff-studies-2012>

[6] <http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award>

[7] <http://www.jnews.am/mane-asryan>

[8] <http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek>